ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 նոյեմբերի 2009 թվականի N 921-Ա

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԽՈՐ ԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 5-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 550-Ն որոշման՝

1. Հաստատել՝

1) Հայաստան-Եվրամիություն խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի բանակցային գործընթացն ապահովող մարմինների կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստան-Եվրամիություն խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի բանակցային գործընթացն ապահովող մարմինների գործունեության կանոնակարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստան-Եվրամիություն խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի բանակցային գործընթացն ապահովող միջգերատեսչական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ
Տ. Սարգսյան

2009 թ. նոյեմբերի 3

Երևան

Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2009 թ.

նոյեմբերի 3-ի N 921-Ա որոշման

Կ Ա Ռ Ո Ւ Յ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԽՈՐ ԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ



ԽՀԱԱՀ՝ խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր

ԵՄ ԽԹ՝ Եվրամիության խորհրդատվական թիմ

ՀԵՏԻԽԿ՝ Հայ-եվրոպական տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության կենտրոն

ՀԲ՝ Համաշխարհային բանկ

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար Դ. Սարգսյան

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2009 թ.

նոյեմբերի 3-ի N 921-Ա որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԽՈՐ ԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստան-Եվրամիություն խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի (այսուհետ՝ ԽՀԱԱՀ) բանակցային գործընթացն ապահովվում է ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացն ապահովող մարմինների միջոցով:

2. ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացն ապահովող մարմինների գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

3. ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացն ապահովող մարմիններն իրենց գործունեությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնակարգին համապատասխան:

II. ԽՀԱԱՀ-Ի ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացն ապահովող մարմինների նպատակներն են՝

1) Հայաստան-Եվրամիություն ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացի իրականացումը.

2) Հայաստան-Եվրամիություն ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացի շրջանակներում առաջադրված նախապայմանների իրականացման ապահովումը:

5. ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացն ապահովող մարմինների խնդիրներն են՝

1) ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացն ապահովող մարմինների կառուցվածքում ընդգրկված պետական կառավարման մարմինների, գործարար համայնքի և քաղաքացիական հասարակության շահագրգիռ ներկայացուցիչների միջև ակտիվ համագործակցության և մեկ միասնական բանակցային որոշման մշակման ապահովումը.

2) Հայաստան-Եվրամիություն ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացի շրջանակներում տեղեկատվության հավաքագրման, ամփոփման, վերլուծման և բանակցային փաթեթի պատրաստման ապահովումը:

III. ԽՀԱԱՀ-Ի ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացն ապահովող մարմինների կառուցվածքում ներգրավված են՝

1) ԽՀԱԱՀ-ի քաղաքական համակարգողը՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարը, որն իրականացնում է Հայաստան-Եվրամիություն ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացի քաղաքական համակարգումը, ինչպես նաև ղեկավարում է ԽՀԱԱՀ-ի միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքները, անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում Եվրամիության հետ Հայաստանի Հանրապետության համագործակցությունը համակարգող հանձնաժողովին.

2) ԽՀԱԱՀ-ի միջգերատեսչական հանձնաժողովը՝ միջգերատեսչական հանձնաժողովի անդամներն են Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի նոյեմբերի 3-ի N 921-Ա որոշման N 3 հավելվածում ներկայացված գերատեսչությունների ղեկավարների տեղակալները և ԽՀԱԱՀ-ի տեխնիկական համակարգողը: Միջգերատեսչական հանձնաժողովի անդամներից անհրաժեշտության դեպքում կարող է ձևավորվել բանակցային թիմ՝ ԽՀԱԱՀ-ի գլխավոր բանակցողի գլխավորությամբ բանակցություններ իրականացնելու համար.

3) ԽՀԱԱՀ-ի գլխավոր բանակցողը՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալը, որն իրականացնում է ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացը և պատասխանատու է բանակցային օրակարգի ձևավորման, բանակցությունների իրականացման համար, ինչպես նաև բանակցություններից առաջ Հայաստանի Հանրապետության միասնական դիրքորոշման և բանակցություններից հետո տեղի ունեցած զարգացումները ԽՀԱԱՀ-ի միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար.

4) ԽՀԱԱՀ-ի տեխնիկական համակարգողը՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի համապատասխան վարչության պետը, որն իրականացնում է ԽՀԱԱՀ-ի շրջանակներում տեխնիկական համակարգումը, կազմակերպում է ԽՀԱԱՀ-ի միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի աշխատանքները, ապահովում կապը Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչների և Եվրոպական միությունում Հայաստանի Հանրապետության առևտրային ներկայացուցչի հետ, ԽՀԱԱՀ-ի գլխավոր բանակցողի հետ մասնակցում է բանակցային գործընթացին, կազմակերպում բանակցային փաթեթի նախապատրաստման աշխատանքները, մասնակցում է ԽՀԱԱՀ-ի աշխատանքային խմբերի համակարգման աշխատանքներին, ներկայացնում ԽՀԱԱՀ-ի միջգերատեսչական հանձնաժողովի որոշումները.

5) ԽՀԱԱՀ-ի տեխնիկական համակարգողին աջակցող թիմը՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի համապատասխան վարչության կազմում գործող բաժին, որն աջակցում է ԽՀԱԱՀ-ի տեխնիկական համակարգողին, պատրաստում ԽՀԱԱՀ-ի միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի փաստաթղթերը, կազմում նիստերի արձանագրությունները, ապահովում կապը ԽՀԱԱՀ-ի միջգերատեսչական հանձնաժողովի և աշխատանքային խմբերի միջև, համագործակցում ԽՀԱԱՀ-ի գործարար համայնքի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, պատրաստում ԽՀԱԱՀ-ի լուսաբանման վերաբերյալ նյութերը.

6) ԽՀԱԱՀ-ի աշխատանքային խմբերը՝ որոնք ստեղծվում են ԽՀԱԱՀ-ի միջգերատեսչական հանձնաժողովի կողմից: ԽՀԱԱՀ-ի աշխատանքային խմբերը մշակում են ոլորտային գործողությունների ծրագրեր, պատասխանատու են բանակցությունների ընթացքում բարձրացված խնդիրների վերաբերյալ համապատասխան ուսումնասիրություններ, վերլուծություններ կատարելու, տեղեկատվություն հավաքագրելու, մասնագիտական քննարկումներ կազմակերպելու և եզրակացություններ ներկայացնելու համար: ԽՀԱԱՀ-ի աշխատանքային խմբերից յուրաքանչյուրն ունի ղեկավար, որը կարող է լինել

համապատասխան ոլորտի ԽՀԱԱՀ-ի միջգերատեսչական հանձնաժողովի անդամը կամ այդ ոլորտի համար պատասխանատու գերատեսչության ղեկավարը կամ նրա տեղակալը.

7) ԽՀԱԱՀ-ի իրավախորհրդատուն՝ երկու իրավախորհրդատուները, ովքեր ապահովում են ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացի շրջանակներում իրավական փաստաթղթերի վերաբերյալ կարծիքների տրամադրումը, համադրումը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Եվրամիությունում գործող օրենսդրության հետ, ներկայացնում են իրավական եզրակացություն, մշակում ԽՀԱԱՀ-ի դրույթները.

8) ԽՀԱԱՀ-ի տեխնիկական աջակցություն, թարգմանչական կենտրոնը՝ ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմում ստեղծված տեխնիկական աջակցության բաժինը և թարգմանչական կենտրոնը, որոնք իրականացնում են ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացի շրջանակներում բոլոր անհրաժեշտ տեխնիկական բնույթի օժանդակության աշխատանքները, մասնավորապես, քննարկումների համար դահլիճների վարձակալումը, ինտերնետային էջի պատրաստումը և պարբերական թարմացումը, իսկ թարգմանչական կենտրոնն ապահովում է ԽՀԱԱՀ-ի շրջանակներում անհրաժեշտ փաստաթղթերի թարգմանությունը.

9) ԽՀԱԱՀ-ի գործարար համայնքը՝ Հայաստանի Հանրապետության գործարար համայնքի ներկայացուցիչները, որոնք հետաքրքրված են և օժանդակում են Հայաստան-Եվրամիություն ԽՀԱԱՀ-ի շրջանակներում իրականացվող գործընթացներին, իրականացնում են ոլորտային ուսումնասիրություններ, կազմակերպում քննարկումներ, անհրաժեշտության դեպքում մասնակցում ԽՀԱԱՀ-ի միջգերատեսչական հանձնաժողովի նիստերին՝ դիտորդի կարգավիճակով.

10) ԽՀԱԱՀ-ի քաղաքացիական հասարակությունը, ՀԿ-ն՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, հասարակական կազմակերպություններ, որոնք հետաքրքրված են և օժանդակում են Հայաստան-Եվրամիություն ԽՀԱԱՀ-ի շրջանակներում իրականացվող գործընթացներին, իրականացնում են ոլորտային ուսումնասիրություններ, կազմակերպում քննարկումներ, անհրաժեշտության դեպքում մասնակցում ԽՀԱԱՀ-ի միջգերատեսչական հանձնաժողովի նիստերին՝ դիտորդի կարգավիճակով:

7. ԽՀԱԱՀ-ի քաղաքական համակարգողը

1) ԽՀԱԱՀ-ի միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նախագահը (այսուհետ՝ նախագահ) ԽՀԱԱՀ-ի քաղաքական համակարգողն է.

2) նախագահն իրականացնում է Հայաստան-Եվրամիություն ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացի քաղաքական համակարգումը.

3) նախագահը հրավիրում և նախագահում է հանձնաժողովի նիստերը.

4) նախագահը Հայաստանի Հանրապետության Նախագահին, Հայաստանի Հանրապետության վարչապետին առնվազն տարեկան երկու անգամ զեկուցում է հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին:

8. ԽՀԱԱՀ-ի միջգերատեսչական հանձնաժողովը

1) հանձնաժողովի անդամները Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի նոյեմբերի 3-ի N 921-Ա որոշման N 3 հավելվածում ներկայացված նախարարությունների և գերատեսչությունների՝ նախարարների և ղեկավարների տեղակալներն են.

2) հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով: Հերթական նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ, իսկ արտահերթ նիստերը հանձնաժողովը գումարում է նախագահի կամ ԽՀԱԱՀ-ի գլխավոր բանակցողի կամ հանձնաժողովի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ.

3) հանձնաժողովի անդամները նիստերին մասնակցում են անձամբ.

4) նախագահի բացակայության դեպքում կամ նրա հանձնարարությամբ հանձնաժողովի նիստը վարում է ԽՀԱԱՀ-ի գլխավոր բանակցողը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է.

5) հանձնաժողովի նիստի օրակարգն առաքվում է հանձնաժողովի անդամներին և հրավիրված անձանց՝ հանձնաժողովի նիստից առնվազն 5 աշխատանքային օր (արտահերթ նիստի դեպքում՝ 3 աշխատանքային օր) առաջ: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իրավասու է հանձնաժողովի նիստից առնվազն 20 աշխատանքային օր առաջ ԽՀԱԱՀ-ի տեխնիկական համակարգողին ներկայացնելու առաջարկություն՝ օրակարգում ներառելու համար.

6) հանձնաժողովի անդամի՝ օրակարգի վերաբերյալ առաջարկությունն ընդգրկվում է նիստի օրակարգում՝ նախագահի նախաձեռնությամբ:

7) հանձնաժողովի յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ: Հերթական նիստում լսվում են նախկինում ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին զեկուցումները.

8) հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունն ստորագրվում է նիստը վարողի կողմից.

9) հանձնաժողովի որոշումները ենթակա են պարտադիր իրականացման՝ հանձնաժողովի անդամների կողմից.

10) հանձնաժողովի այն անդամը, ով համաձայն չէ հանձնաժողովի ընդունած որոշմանը, ներկայացնում է իր գրավոր հատուկ կարծիքը, որը կցվում է որոշմանը և գրառվում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ.

11) հանձնաժողովի անդամը պաշտոնից ազատվելու պահից կորցնում է հանձնաժողովին անդամակցությունը, և նրա փոխարեն հանձնաժողովի կազմում ընդգրկվում է նույն պաշտոնն ստանձնած անձը.

12) հանձնաժողովի նիստերին առանց ձայնի իրավունքի կարող են մասնակցել հրավիրված անձինք, մասնավորապես, Եվրոպական միությունում Հայաստանի Հանրապետության առևտրային ներկայացուցիչը, ԽՀԱԱՀ-ի գործարար համայնքի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության գրասենյակի ներկայացուցիչներ.

13) հանձնաժողովի անդամներից, ԽՀԱԱՀ-ի աշխատանքային խմբերի անդամներից անհրաժեշտության դեպքում կարող է ձևավորվել բանակցային խումբ՝ ԽՀԱԱՀ-ի գլխավոր բանակցողի գլխավորությամբ բանակցություններ իրականացնելու համար:

9. ԽՀԱԱՀ-ի գլխավոր բանակցողը

1) ԽՀԱԱՀ-ի գլխավոր բանակցողը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալն է.

2) Հայաստան-Եվրամիություն ԽՀԱԱՀ-ի շրջանակներում իրականացնում է բանակցությունները.

3) հանձնաժողովին է ներկայացնում բանակցային փաթեթը.

4) հանձնաժողովին է ներկայացնում բանակցությունների արդյունքները, Եվրամիության կողմից ներկայացված առաջարկությունները և անհրաժեշտ նախապայմանները, որոնց հիման վրա կարող են մշակվել ոլորտային գործողությունների ծրագրեր: Հանձնաժողովի կողմից ստեղծված ԽՀԱԱՀ-ի աշխատանքային խմբերը մշակում են ոլորտային գործողությունների ծրագրերը, որոնք հաստատում է հանձնաժողովը, և դրանք ենթակա են պարտադիր իրականացման.

5) Եվրոպական միությունում Հայաստանի Հանրապետության առևտրային ներկայացուցիչը, ԽՀԱԱՀ-ի գլխավոր բանակցողի համաձայնությամբ, ԽՀԱԱՀ-ի շրջանակներում կարող է վարել բանակցություններ Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչների հետ, տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն և նախագահին ու ԽՀԱԱՀ-ի գլխավոր բանակցողին ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների մասին.

6) նախագահին և հանձնաժողովին է ներկայացնում տարեկան հաշվետվություն կատարված աշխատանքների մասին:

10. ԽՀԱԱՀ-ի տեխնիկական համակարգողը

1) ԽՀԱԱՀ-ի տեխնիկական համակարգողը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի համապատասխան վարչության պետն է.

2) կազմակերպում է տեղեկատվության տրամադրման և ստացման աշխատանքները Եվրոպական հանձնաժողովի համապատասխան ներկայացուցիչների, նախագահի, հանձնաժողովի անդամների, ԽՀԱԱՀ-ի գլխավոր բանակցողի, Եվրոպական միությունում Հայաստանի Հանրապետության առևտրային ներկայացուցչի և ԽՀԱԱՀ-ի աշխատանքային խմբերի ղեկավարների միջև.

3) մասնակցում է բանակցային գործընթացին.

4) կազմակերպում է ԽՀԱԱՀ-ի շրջանակներում բանակցային փաթեթի նախապատրաստման աշխատանքները.

5) մասնակցում է ոլորտային գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներին, համակարգում դրանց իրականացման դիտանցումը և նախագահին ու ԽՀԱԱՀ-ի գլխավոր բանակցողին ներկայացնում է հաշվետվություն կատարված աշխատանքների մասին.

6) ղեկավարում է ԽՀԱԱՀ-ի տեխնիկական համակարգողին աջակցող թիմի աշխատանքները.

7) կազմակերպում է ԽՀԱԱՀ-ի գլխավոր բանակցողի տարեկան հաշվետվության պատրաստման աշխատանքները.

8) կազմակերպում է միջգերատեսչական հանձնաժողովի նիստերը.

9) ներկայացնում է միջգերատեսչական հանձնաժողովի որոշումները.

10) աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով համագործակցում է Եվրամիության խորհրդատվական թիմի, Հայ-եվրոպական տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության կենտրոնի հետ:

11. ԽՀԱԱՀ-ի տեխնիկական համակարգողին աջակցող թիմը

1) ԽՀԱԱՀ-ի տեխնիկական համակարգողին աջակցող թիմը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի համապատասխան վարչության կազմում գործող բաժինն է.

2) աջակցում է ԽՀԱԱՀ-ի տեխնիկական համակարգողին և իրականացնում նրա հանձնարարականները.

3) իրականացնում է հանձնաժողովի քարտուղարությունը. նախապատրաստում է հանձնաժողովի նիստերն ու օրակարգին վերաբերող համապատասխան նյութերը և կազմակերպում նյութերի տրամադրումը հանձնաժողովի անդամներին, արձանագրում հանձնաժողովի նիստերը.

4) նախապատրաստում է բանակցային փաթեթը.

5) հանձնաժողովի որոշումները տրամադրում է հանձնաժողովի անդամներին, ԽՀԱԱՀ-ի աշխատանքային խմբերի ղեկավարներին.

6) ապահովում է տեղեկատվության փոխանակումը, հավաքագրումը և տրամադրումը ԽՀԱԱՀ-ի աշխատանքային խմբերի միջև.

7) պատրաստում է ԽՀԱԱՀ-ի լուսաբանման վերաբերյալ նյութերը և մասնակցում ԽՀԱԱՀ-ի մասին իրազեկության բարձրացման աշխատանքներին.

8) համագործակցում է ԽՀԱԱՀ-ի գործարար համայնքի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, կազմակերպում հանդիպում-քննարկումներ ԽՀԱԱՀ-ի գլխավոր բանակցողի և ԽՀԱԱՀ-ի տեխնիկական համակարգողի հետ:

12. ԽՀԱԱՀ-ի աշխատանքային խմբերը

1) հանձնաժողովի որոշմամբ կարող են ստեղծվել ԽՀԱԱՀ-ի աշխատանքային խմբեր: ԽՀԱԱՀ-ի աշխատանքային խմբերի գործունեության կանոնակարգը հաստատում է հանձնաժողովը.

2) ԽՀԱԱՀ-ի աշխատանքային խմբի ղեկավար կարող է լինել համապատասխան ոլորտի հանձնաժողովի անդամը կամ այդ ոլորտի համար պատասխանատու գերատեսչության ղեկավարը կամ նրա տեղակալը.

3) ԽՀԱԱՀ-ի աշխատանքային խմբերն իրականացնում են ոլորտային ուսումնասիրություններ, վերլուծություններ:

13. ԽՀԱԱՀ-ի իրավախորհրդատուն

1) երկու իրավախորհրդատուներն ապահովում են ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացի շրջանակներում իրավական փաստաթղթերի վերաբերյալ կարծիքների տրամադրումը և համադրումը Հայաստանի Հանրապետության օրենսդրության հետ.

2) ներկայացնում են իրավական եզրակացություն.

3) մշակում են ԽՀԱԱՀ-ի դրույթները:

14. ԽՀԱԱՀ-ի տեխնիկական աջակցությունը, թարգմանչական կենտրոնը

1) իրականացնում են ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացի շրջանակներում բոլոր անհրաժեշտ տեխնիկական բնույթի օժանդակության աշխատանքները, մասնավորապես, քննարկումների համար դահլիճների վարձակալումը, ինտերնետային էջի պատրաստումը և պարբերական թարմացումը.

2) թարգմանչական կենտրոնն ապահովում է ԽՀԱԱՀ-ի շրջանակներում անհրաժեշտ փաստաթղթերի թարգմանությունը:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար Դ. Սարգսյան

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2009 թ.

նոյեմբերի 3-ի N 921-Ա որոշման

Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԽՈՐ ԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՀՀ էկոնոմիկայի նախարար
- հանձնաժողովի նախագահ(ԽՀԱԱՀ-ի քաղաքական համակարգող)

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
- անդամ, (ԽՀԱԱՀ-ի գլխավոր բանակցող)

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
- անդամ

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ
- անդամ

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
- անդամ

ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
- անդամ

ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
- անդամ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
- անդամ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
- անդամ

ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
- անդամ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
- անդամ

ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
- անդամ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
- անդամ

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ
- անդամ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ
- անդամ

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ
- անդամ

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի տեղակալ
- անդամ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
- անդամ

ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովի նախագահի տեղակալ
- անդամ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի տեղակալ
- անդամ

«Հայկական զարգացման գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
- անդամ

Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) գործադիր տնօրեն
- անդամ

ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ
- անդամ

ԽՀԱԱՀ-ի տեխնիկական համակարգող
- անդամ (հանձնաժողովի քարտուղար)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար Դ. Սարգսյան